



ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

## ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

### *Հաստատվել է*

*Գիտակոորդինացիոն խորհրդի  
25.12.2015թ. թիվ 8 նիստում*

### **1. Հիմնական դրույթներ**

1.1. Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) գիտահետազոտական կենտրոնը (այսուհետ՝ Կենտրոն) գիտական հետազոտություններ իրականացնող կառուցվածքային ստորաբաժանում է:

1.2. Կենտրոնը ստեղծվում է ռեկտորի կողմից: Կենտրոնի ղեկավարը և աշխատողները նշանակվում են ռեկտորի հրամանով:

1.3. Կենտրոնն իր գործունեությամբ ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ, Համալսարանի կանոնադրությամբ, գիտական խորհրդի որոշումներով, ռեկտորի հրամաններով և սույն կանոնակարգով, ինչպես նաև պետական չափորոշիչներով:

## 2. Հիմնական խնդիրներ

2.1. Հիմնարար և կիրառական հետազոտությունների անցկացում՝ Համալսարանի գերակա ուղղություններով:

2.2. Կենտրոնի իրավասություններն են.

- Փորձարարական և կլինիկալաբորատոր հետազոտության արդիականության եղանակների յուրացում և ներդրում:
- Աշխատատեղերի և գիտախորհրդատվական օգնության տրամադրում ամբիոնների աշխատակիցներին, ասպիրանտներին, հայցորդներին և ուսանողներին՝ ինքնուրույն և Կենտրոնի հետ համատեղ գիտական հետազոտություն անցկացնելու համար:
- Կենտրոնի բազայի վրա կլինիկական օրդինատորների և ուսանողների անկախ գիտական խմբերի ստեղծում՝ տեսական և գործնական բժշկության առավել արդիական ուղղություններով գիտական հետազոտություններ կատարելու նպատակով:
- Կենտրոնի համապատասխան ստորաբաժանումներում ուսանողների հետ գիտագործնական պարապմունքների անցկացում՝ հետազոտության ժամանակակից մեթոդների և սարքավորումների հետ ծանոթացնելու նպատակով:
- Համագործակցություն գիտաուսումնական հաստատությունների և հասարակական կազմակերպությունների հետ:
- Կենտրոնի գիտաշխատողների որակավորում՝ հիմք ունենալով «Գիտաշխատողների որակավորման բնութագրի» գործող դրույթները:

## 3. ԳՀԿ կառուցվածքը

3.1. Կենտրոնի կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատվում է համալսարանի ռեկտորի կողմից՝ գիտակոորդինացիոն խորհրդի նախնական քննարկումից, գիտության գծով պրոռեկտորի հետ համաձայնեցնելուց և Կենտրոնի ղեկավարին ներկայացնելուց հետո:

3.2. Կենտրոնի գիտական միավորները (լաբորատորիաները և խմբերը) ձևավորվում են մեթոդական և թեմատիկ սկզբունքների համաձայն:

3.3. Կենտրոնում կարող են ստեղծվել նաև այլ շարժական ստորաբաժանումներ՝ տեսական և կլինիկական բժշկության առավել արդիական խնդիրների մշակման նպատակով:

#### 4. Կենտրոնի գիտական գործունեության ղեկավարումը

4.1. Կենտրոնի ընդհանուր համակարգումն իրականացնում է Համալսարանի գիտության գծով պրոռեկտորը:

4.2. Կենտրոնի ղեկավարումն իրականացնում է ղեկավարը:

4.3. Կենտրոնի ղեկավարն իր գործունեությամբ հաշվետու է Համալսարանի ռեկտորին և գիտության գծով պրոռեկտորին:

4.4. Կենտրոնի ղեկավարը՝

- կազմակերպում և պլանավորում է Կենտրոնի գործունեությունը,
- համակարգում է Համալսարանի այլ ստորաբաժանումներից Կենտրոն ուղարկված աշխատողների (ասպիրանտներ, ուսանողներ, գործուղված անձինք) աշխատանքը,
- ռեկտորին է ներկայացնում այլ կազմակերպությունների հետ համաձայնագրերի նախագծեր,
- համաձայն Կենտրոնի խնդիրների՝ կոորդինացնում և պլանավորում է գիտահետազոտական աշխատանքները,
- հանձնարարություններ է տալիս Կենտրոնի աշխատողներին,
- հսկողություն է իրականացնում Կենտրոնի աշխատողների գործունեության նկատմամբ,
- Համալսարանի ղեկավարության համաձայնությամբ Կենտրոնի գիտական հետազոտություններին առնչվող հարցերը ներկայացնում է արտաբուհական կազմակերպություններում և պետական մարմիններում,
- ապահովում է պլանային գիտահետազոտական աշխատանքների, Համալսարանի ամբիոնների, գիտական ստորաբաժանումների և այլ կազմակերպությունների հետ իրականացվող համալիր գիտական հետազոտությունների որակյալ և ժամանակին կատարումը,
- Համալսարանի ղեկավարությանը ներկայացնում է գիտական հետազոտությունների հաջող իրականացումն ապահովող ստորաբաժանման աշխատողներին պարգևատրման առաջարկություններ:

4.5. Կենտրոնի տնօրենն իրավունք ունի իր իրավասությունները ժամանակավորապես պատվիրակել Կենտրոնի աշխատողներին՝ ռեկտորի համաձայնությամբ:

## 5. Կենտրոնի աշխատողները

5.1. Կենտրոնի աշխատողներն են գիտքարտուղարը, լաբորատորիայի վարիչը, ավագ գիտաշխատողը, գիտաշխատողը և օժանդակ աշխատողները:

5.2. Կենտրոնի աշխատողները՝

- իրականացնում են Կենտրոնի գործառույթներից բխող աշխատանքներ,
- կատարում են ռեկտորի, գիտական գծով պրոռեկտորի և Կենտրոնի տնօրենի հանձնարարությունները:

5.3. Գործատուն կարող է իրականացնել աշխատողների որակավորման ստուգում (ատեստավորում)՝ աշխատողների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների համապատասխանությունը որոշելու համար: Աշխատողների որակավորման ստուգումն անցկացվում է թեստավորման կամ հարցազրույցի միջոցով:

5.4. Կենտրոնի աշխատողները պարտավոր են ենթարկվել ՀՀ աշխատանքային օրենսդրությանը, Համալսարանի ներքին կարգապահական կանոններին, ինչպես նաև աշխատանքային էթիկայի կանոններին:

## 6. ԳՀԿ ֆինանսավորման աղբյուրները

- Համալսարանի կողմից հատկացվող միջոցները:
- Դրամաշնորհներից ստացվող գիտական հետազոտությունների ֆինանսավորման միջոցները:
- ՀՀ կրթության և գիտության նախարարության փորձագիտական հանձնաժողովի մրցույթն անցած թեմաների պետական ֆինանսավորման միջոցները:
- Գիտատեխնիկական և սոցիալական զարգացման ֆոնդը, որը ձևավորվում է ըստ տնտեսաշարժային գործունեության արդյունքների:
- Պատվիրատուների հետ սահմանված կարգով կնքված պայմանագրերով ստացվող միջոցները և այլ աղբյուրներ: